




THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.



ՏԻՊՈՒՄԻ ՍԻՆՏԱԿՆԵՐԸ ԲԱՑ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՆԻ:

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 32

ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱՐԱԹ, ՅՈՒՆԻՍ, 18 1898

ԳԻՆ 3 ՍԷՆՑ

ՊԱՏԵՐԱՉՊԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Այս ամսոյ 11ին առաջին անգամ ըլլալով ամերիկեան դրօշակը պարզուեցաւ Բիւպայի հողին վրայ: Նոյն օր Օրէկոն, Մարպլէնթ, Վիլքսըն և Տօլֆին ումբակոծեցին կուսթանամոյի արտաքին բերդերն, ու զայն աւերելէ վերջ, 600 զօրք ցամաք կանեցին Փանթլըր փոխարանաւէն: այս վերջինք իրենց առաջին գործ ըրին ամերիկեան դրօշ պարզել պանիպաղոց թողուցած փրատակներուն վրայ: Թշնամիք քանիցս յարձակում գործած են թէև, բայց ետ մղուած են: Ուրիշ լուրերու նայելով չարս ամերիկացի զինուոր մեռած են այս յարձակմանց ժամանակ:

—Կուսթանամո, որ Սանթիակոյէ 40 մղոնի չափ դէպի Արևելք կ'ընայ, կ'ըսուի թէ լաւագոյն անկ մը պիտի ըլլայ ամերիկացոց ցամաքը զօրք կանելու համար:

—Քաղաքի նաւահանգիստը ամբողջնելու համար նոր թնդանօթ մը կը շինուի այժմ կառավարութեան ձուլարանին մէջ՝ ի Ուոթլըր վիլլէթ: Աշխարհի ամենէ մեծ թնդանօթն պիտի ըլլայ այս, որոյ բերնին արտադրածն է 36 մասնաշափ: Դեռ վերջնականապէս ստուգուած չէ թէ այս նոր հրէջլ ուսմբն, որ պիտի կռնէ 2300 տոննա, որչափ պիտի կրնայ հեռի նետուիլ: Արուեստագէտք կը կարծեն սակայն թէ ասոր անձուռնի դուռը 3500 կանգուն հեռուարութենէ զիրութեամբ պիտի կրնայ ծակել 30 մասնաշափ թանձրութիւն ունեցող պողպատն: Աստուած օգնութեան հասնի այն նաւուն, որոյ վրայ գտալու առիթը պիտի ունենայ այս անձուռնի հրէջլ գործին:

—Քանաւայ ապստանող Ուաշինկթընի սպանիական դեսպանատան քարտուղարն ու քանաւայի սպանիական հրեպատանն, Գարանդա և Տըպօսք, որք խնամակալ թագուհիի կառավարութեան պաշտօնական լըրտեսներն էին ի քանաւայ, այսօր Լսպանիայ կը վերադառնան՝ տեղական կառավարութեան ստիպմամբ: Թէև անգլիական օրինաց հակառակ է զանոնք արտաքսել երկրէն, բայց օրէնքը թոյլ կուտար զանոնք ձերբակալել, դատել և պատժել: Լըրտեսներն այս անպատահութեանց տեղի չ'տալու համար է որ կը փախին կանխաւ:

—Ուաշինկթընի քաղաքական բարձր ակումբներու մէջ կը խօսուի թէ Սպանիա ներուպական կառավարութեանց զիմուի ընելու վըրայ է՝ անոնց միջամտութիւնը խնդրելու համար: Լորս Սալիսպլըրի մեծ տէրութեանց Լօնտոնի ներկայացուցիչներուն թեղաբարձ է խրատել խնամակալ թագուհիի կառավարութիւնը՝ տեղի տալու և խաղաղութիւն խնդրելու համար:

—Ս. Պապը հեռագրած է Սպանիոյ թագուհիին ըսելով թէ՝ նորին Սրբազնութիւնն պատրաստ է նախաձեռնարկ ըլլալ երկու պատերազմող կառավարութեանց մէջ միջամտելու համար: Թագուհին շնորհակալ եղած է Ս. կապի առաջարկութեան համար:

—Կ'ըսուի թէ Բիւպայի դուրսի աշխարհին հետ կապող բոլոր հեռագրական թելերը կարուած վիճակի մէջ են այժմ: Հեռագրի մը լուր կուտայ սակայն թէ ամերիկացիք կուսթանամոյի և Բէյի Հայթիէնի թելը պիտի նորոգեն, Բիւպայի այդ նաւահանգիստն Նիւ Եորքի հետ ուղղակի յարաբերութեան մէջ դնելու համար:

—Մատրիաէն կը հեռագրուի թէ ծովակալ Սամուելի զրահուորներուն ութը հասը Սանթիակոն ումբակոծեր են նորէն ամսոյ 10ին, ու ջանացեր են քանի մը փոխադրանքներէ զօրք կանել ցամաք: Բայց չեն կրցած յաջողիլ:

—Ուրիշ հեռագրի մը լուր կը տանի Մատրիա թէ 11 ամերիկեան փոխադրանքներ ևս Սանթիակոյի առջև կանած են՝ զօրք ու պաշար բերելով իրենց հետ:

—Քանաւայի մէկ մասը ճամբայ ելաւ զօրավար Շէֆթըրի հրամանատարութեամբ, 32 մեծ փոխադրանքներով: Այս նաւեր թէև պատրաստ էին ճամբայ կրնել չարաթէ մ'իվեր, բայց պատերազմական ժողովը ընելով թէ սպանիական զրահանաւեր տեսնուած էին ամերիկեան ջուրերուն մէջ, որոշած էր սպանիական ջանի մ'օր: Սա երեսուն երկու փոխադրանքներն, որք այժմ 15000 զօրք կը տանին Սանթիակոյ 17 մարտանաւերու առաջնորդութեամբ, շուտով պիտի վերադառնան 12000 զօրք ալ Զօր Բոֆինկէրի հրամանատարութեամբ Փօրթօ Րիօ տանելու, և 40 հազար հոգի՝ Զօր Լիի հրամանատարութեամբ՝ դէպի Հալանայ:

—Ամերիկեան նաւատորմի մը Սպանիայ դրկելու խօսքեր կան այժմ: կը կարծուի թէ այսպիսի քայլ մը պիտի ստիպէ Սպանիան քաղաքացինայ թէ՝ իրուր է մըցիլ անհամեմատ հզօր երկրի մը հետ, և խաղաղութիւն խնդրել՝ ո'ւ է պայման ընդունելու խոստումով:

—Ասթըր թնդանօթի մէջ գունդը, որ հռչակաւոր միլիտանտիոնոյ կողմէ կազմակերպուած ու կառավարութեան նուիրուած էր, Մանիլայ երթալու համար ճամբայ ելաւ: Այս գնդի կազմակերպութեան համար տեղակալ Ասթըր 100 հազար տուրք ծախք ըրած էր: Մէկը այնպէս կը համեմատի 1000ին, ինչպէս Ասթըրի այս 100 հազարը կը համեմատի իր միլիոններուն հետ, որք արդիւնք են ժողովրդի արդար քրտանց:

—Թայմըզի պատերազմական թղթակիցն ընդարձակ նամակաւ մը գովեստիւք կը խօսի ամերիկեան զինուորի մասին, բայց կը դատապարտէ անոր հազուստներն և զանոնք Ուաշինկթընի քաղաքագէտ-դերձակներուն գործը կ'անուանէ:

—Նոր նաւատորմի մը կազմուած է ի Համթըն Բոսս ծովակալ Գամարայի նաւախմբին առաջն ան-

նելու համար, եթէ երբէք այս վերջինս յանդգնի ամերիկեան ջրերը գալ, ինչ որ անհավանական է:

—Յունիս 27ին Քի Ուէսթի մէջ աճուրդիւ պիտի վաճառուին 20 ըսպանիական գերի ինկած շոգենաւեր:

—Գանձային գործոց նախարարութիւնը՝ նոր օրէնքին համաձայն պատերազմական ծախուց համար 200 միլիոն տուրքի պարտաթուղթ (պօստ) կանեց՝ 3 առ հարիւր տոկոսով, 10 տարիէն վճարելի: Այս պօստերէ մէկն որ կրնայ ծախու առնել ուղղակի Ուաշինկթըն դիմելով: Գիններն կ'սկսին 20 տուրքէ՝ և կը բարձրանան մինչև 10000 տուրք՝ իւրաքանչիւրին համար:

—Մատրիաէն թերթի մը կը հեռագրեն թէ նախարարապետ Սակասթա պիտի ընդունի եղեր խաղաղութեան առաջարկ մը, եթէ ուրիշ ազգի մը կողմէ առաջարկուի:

—Պաշտօնական շըլաններու մէջ մտահոգութիւն կը պատճառէ սակայն թէ Սանթիակոյի սպանիական բանակն թուով աւելի եղած լինել կը թուի զօր: Շաֆթըրի բանակէն, որ մեկնեցաւ անցեալ օր:

—Կուսթանամոյի կուրիս մէջ սպանիական չորս ամերիկացիներուն մարմինները տեսնող պաշտօնայք ըսած են թէ՝ Սպանիացիք վայրենաբար ջարդ ու կոտոր ըրած են չորս նահատակներն՝ հակառակ պատերազմական և մարդկային օրինաց:

—Ուաշինկթընի անգլիական դեսպանն ըսած է եղեր նախագահին թէ երբ Ամերիկացիք գրաւեն Բիւպայն, յայտնամ Անգլիա պիտի միջամտէ՝ պատերազմը դադարեցնելու համար: Կ'ըսուի թէ այս է եղեր պատճառն որ մղեր է նախագահն անպարել Բիւպայի գրաւումն:

—Ո. Տ. Պրայն, Ռամկավարական պետի նախագահական ընտրելին, առնետախօսութեան մը մէջ բողոքած է այն քաղաքականութեան դէմ՝ որով քաղաքացիական պատերազմը կը ձգտուի ամերիկեան դրօշը պարզել ուրիշ երկիրներու վրայ ու տիրել անոնց:

—Երեսփոխանական ժողովը 91ի դէմ 209 ջուէով որոշեց Հայվայ կղզիները միացնել նահանգաց հետ: Ընթերցողք գիտեն անշուշտ թէ այս կղզիներու կառավարութիւնն տարին արտաք զորոշած էր մտնել Ընթըլ Սամի դրօշակին տակ:

—Մանիլայի առջև գերմանական զրահանաւք կը գուրարուին հետըզհետէ: Կ'ըսուի թէ երոսպական միւս կառավարութիւնք թոյլ չի պիտի տան անոնց դժուարութիւն մը ունենալ Մովակալ Տուվիի հետ:

ՔԼՕՆՏԱՑՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նէշուէ, Յունիս 10.
Քաղաքէս Բլոստայք գնացող Հայերն Լէյք Պէննէթէն, Մայիս 19 թուակիր, քանի մը նամակներ յղած են հոս, որոնցմէ կը քաղենք հետեւեալներն,
Նէշուէ, Յունիս 10.
Քաղաքէս Բլոստայք գնացող Հայերն Լէյք Պէննէթէն, Մայիս 19 թուակիր, քանի մը նամակներ յղած են հոս, որոնցմէ կը քաղենք հետեւեալներն,

«Ապրիլ 8ին Սկանկուէէն գոյքերնիս վարձու տալով, հետիտան, 40 օրէն Լէյք Պէննէթէն հասանք, որ 45 մղոն ճամբայ է միայն:

Մեզմէ աւելի մ'օտ ճամբով եկողներէն 200ի շափ անձինք ձիւներն տակը մնալով մեռած են: Այս դժուարութիւններու պատճառը ոչ այնչափ ցուրտի սաստկութիւնն է, որչափ ճանապարհի անհարթութիւնը: Հիմայ տեղոյս օրը Նէշուէէն քիչ ցուրտ է. բայց կ'երևի թէ ձմեռը խիստ սաստիկ կ'ըլլայ, անանկ որ սառը մինչև հիմայ կը դիմանայ:

Հոս վրանի տակ կ'ապրինք. մեր հետ կան 14-15 հազար անձինք. կը սպասենք գետի ստոր բացուելուն, ուրկէ նաւով պիտի մեկնինք դէպի Տօն Սիթի, որ 3-4 աւուր ճամբայ է:

Տորեկները շատ երկար են: 18 ժամ գրել կարողաւ շափ լոյս է: Հանքէն վերադարձողները մեծ յաջողութեամբ կը դառնան: Երկիրը ապահով է, մինչև հիմայ չարագործութիւն մը պատահած չէ ընաւ:»
ՋՈՋԻԿ

ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Նկատելով որ ամեն կողմերէ շատ մը բանաստեղծութիւններ կը դրկուին մեզ, և նկատելով որ Տիպի-ՐիՍի մէջ՝ տեղւոյ անձկութեան պատճառաւ չենք կարող զանոնք հըրատարակել, որոշած ենք՝ մեր ընդունած այս ոտանաւորներն՝ մեծաւ մասամբ՝ առանձին հատորի մը մէջ ամփոփել, պայմանաւ որ ամէն փափաքող անձ իր ոտանաւորին համար հարկ եղած շարելու, կէքթըրթայի շինելու և տպագրելու ծախքերն վճարել յանձն առնէ կանխաւ:

Հեղինակներն իրենց իւրաքանչիւր ոտանաւորին համար մէկ կամ երկու օրինակ պիտի ստանան հրատարակուած հատորէն՝ երբ լոյս տեսնէ: Այս հատորը պիտի անուանուի «Ժողովրդական քնար»:

Մանրամասնութեանց համար գըրել լրագրոյս խմբագրութեան:

ԹՐԲԱԿԱՆ ԱՄԵՆԱՐՆՏԻՐ ՍՈՒՐԾ

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ թուրքիական սկսած եմ ընտիր սուրճ բերել սալ՝ հոս վաճառելու համար: Իմ բերել տուած ապրանքս ամենաազնիւ տեսակէն է, անանկ որ միանգամ անոր հոտն ու պիտորթելի համն առնող մէկը պիտի ստիպուի իմ մնայուն յաճախորդս դառնալ: Այս համոզմամբ է որ մէկ փորձ մը միայն կը խնդրեմ արգոյ ընթերցողներէն:

Գիներս շատ դիւրամատչելի են: Հում սուրճին փափաքով 30 սէնթի կը վաճառեմ. իսկ խորոված ու թրքական ջաղացով քաշուածին փափաքով՝ 45 սէնթի միայն:

Փափաքողք հաճին գրել ինձ հետեւալ հասցեով:
Ա. ԳԱՐԱԿԷՕՋԱՆ
Փօսթ Օֆիս, Ուէսթ Հոպոքըն, Ն. Ճ.



ՇԱՐԽԱԹԱԹԵՐՈՒ ԳՐԱԳՐԱԳԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇԱՐԽԱԹ ՕՐԵՐ,
ՏԻԳՐԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՆԻ ԿԵՆՏՐՈՆԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԱՆԷՑ:
Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱՍՏԱՆՈՐԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻՍՏԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ
Տ. ՍԹ. Տարեկան 10 ֆրանք:
Վեցամսեայ 50 Բաժանորդագրին ԿԱՆՈՒԿ
Եռամսեայ 40 վճարելի է միշտ:

Մտքի կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱՐԽԱԹ, ՅՈՒՆԻՍ 18 1898.

ԳՈՐԾ ԿԱՅ ԳՈՐԾՈՂ ՉԿԱՅ

Բաւական ատեն է որ Ամերիկայ եկած եմ: Հոս միշտ
գործի վրայ խօսք եղած է մեր ազգայնոց հետ, որք ի-
ստեղ կը հառաչեն ըսելով «ի՞նչ պիտի ընենք. մեր կեան-
քը կը փտտի գործարաններու մէջ. ի՞նչ թշուառութիւն
է: Թուրքիայ անապահովութիւն կը տիրէ. հոս գործառ-
ութեան կեանքը անտանելի է. ի՞նչ ընենք». և ոմանք
աւելի առաջ երթալով կ'ըսեն թէ «թուրքին սուրը այս
կեանքէն աւելի աղէկ է»:

Ի՞նչ ընելու է. այս է կարեւոր հարցը:
— Բանի սր հոս ենք գործելու է, բայց ոչ գործարա-
նայ մէջ: Միթէ չի կայ միջոց ազատելու գործառական
կեանքէն. կայ, և շատ դիւրին, և առանց ծանրութիւն
մը ԸԼԼալու ուրիշին:

Նախ ընկերութիւն կազմելու է առանց վախի: Մենք
այժմ այնպիսի երկրի մը մէջ կ'ապրինք, ուր առևտրական
մեծ ապարէզ կայ յառաջ երթալու. ապացոյց այս երկ-
րի մարդիկը, որք ընկերութեամբ ձեռնարկած են առև-
տուրի: Ոչ միայն ընկերները, այլ և օտարները յաջողած են
այդ կերպով: Ինչո՞ւ. Հրեայները մեծ տեղ բռնած են առ-
ևտրական շրջանին մէջ. միթէ մենք ասոնցմէ պակաս
խելք ունինք: Աշխարհ կը վկայէ թէ Հայերը առևտրական
մարդիկ են: Բանի որ ետ մնացած ենք՝ պատճառը մեր
չ'ուզելն է. յանցանքը ո՛չ ուրիշին և ո՛չ ալ երկրին, այլ
մերն է:

Ահաւասիկ թեկադրութիւն մը որ թերևս կրնայ օգ-
տակար ԸԼԼալ:

Այսօր Ամերիկայի մէջ կան 15,000 Հայեր, ասոնց
10,000 Ը թող վճարեն հինգական տոլար, որ կընէ 50 հա-
զար տոլարի դրամագումար մը, և թող յանձնեն զայն փո-
ճառու և վստահելի անձանց. թող այս 10 հազար ան-
ձինք, մինչև տարի մը, ամսական մէջ մէկ տոլար ասն
ընկերութեան. որոյ արդիւնքն կ'ըլլայ 120 հազար տոլար,
որ գումարելով նախնական դրամագումարի վրայ 170 հա-
զար տոլարի պատկանելի գումար մը կ'ունենանք յանուն
ընկերութեան՝ առանց անդամներու բաշխելու վրայ ծան-
րութիւն մը ԸԼԼալու: Այս գումարն բաւական է երեք վա-
ճառատուններ հաստատելու ինչու երբ, Շիքագոյ և Պոս-
թոն՝ ամեն տեսակ ապրանք վաճառելու համար, այնպէս
որ Հայերը իրենց բոլոր պէտքերը կարենան իրենց վաճա-
ռատնէն գնել: Եւ եթէ այս վաճառատուն 10 հազար յա-
ճախորդ ունենայ իր անդամներու մէջ, քանի մը հազար-
ներ ալ դրսէն՝ կ'ունենայ հարկաւ: Եւ եթէ իւրաքանչիւր
անդամ միջին հաշուով՝ 150 տոլար առևտուր ընէ տարին,
ըսել է ընկերութիւնն իւր անդամներու հետ միայն մէկ
ու կէս միլիոնի առևտուր պիտի ընէ, բայց ի դրսէն եկող
յաճախորդներէ: Հարկ է ըսել թէ այս ընկերութիւնն յա-
ջողութիւն մը պիտի ԸԼԼայ:

Ընթերցողը եթէ մտածէ այս խնդրի վրայ, պիտի
տեսնէ թէ ապագային որչափ բարիքներ կը ծնին այսպիսի
ընկերութեան մը, որ ժամանակին պէտք պիտի ունենայ
Հայ արհեստաւորներու: Կօչիկ շինող, դերձակ, ժամա-
գործ, հացագործ, աստղագործ ևն. հայերն իրենց ընկե-
րութեան համար աշխատելու պատեհութիւն պիտի ունե-
նան, փոխանակ ուրիշներուն ծառայելու: Երկար պիտի
ԸԼԼայ եթէ աւելի մանրամասնութեան մտնեմ. միայն սա
բաւական է ըսել թէ քանի մը տարիներու մէջ այսպիսի
ընկերութիւն մը կրնայ ժողովրդի զարմանքը շարժել:

Ահա գործ. ահա յաջողելու ճամբայ. բայց գործ կայ,
գործող չ'կայ:
Հըտտըն, Մասս.

Գ. Յ. ՊԵՇԿԵՒՅԵՐԻՒՆԻԱՆ

ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ԵՒ ՇԱՔԱՐԵՂԵՆԵՐՈՒ ԱՌԵՒՏՈՒՐԸ

Գեղեցկատեսիլ Գարունը անցաւ և տօթաբեր Ամառը
եկաւ. Նիւ Եորքի մէջ ապրող շէյններն ու Իտալիոյ
զաւակները սկսան իրենց սովորական բանաստեղծական
առևտուրը: Այս փափուկ առևտուրը իւր բանաստեղծական
ճիւղերն ալ ունի, որոնք, հարկաւ, բանաստեղծութեան
սիրահար ազգերը կ'ընեն միայն: Գարունն ու ամրան գե-
ղեցիկ օրերուն, ազատ փողոցներուն մէջ, Հելլէն ու Իտա-
լացի երիտասարդները առևտուրներու ամենէն բանաստեղ-
ծականովը կ'ընդարին, վասն զի ամենէն բանաստեղծական
ապրանքը կը վաճառեն. . . տեսակ տեսակ ծաղիկներ: Ա-
մենքնիս չե՞նք տեսած այս քաղաքին փողոցներուն մէջ
Յոյն ու Իտալացի երիտասարդներ, որք ծաղիկներու փուն-
ջերը ձեռքերնին կը հրապուրեն մասնաւորաբար սիրուն
ամերիկուհիները: Ի՞նչ հաճելի առևտուր է. բնութեան
ամենէն սիրուն ապրանքը ծախել ամենէն սիրուն ա-
րարածներուն. . . :

Ծաղիկներու առևտուրին չափ հաճելի առևտուր մըն
ալ կայ, որն է պաղպաղակի և շաքարեղէններու վաճա-
ռումը: Պրօտուէյէն սկսեալ մինչև Հարլըմ շաքարեղէն-
ներ վաճառող ամէն խանութներու տէրերը եանքիները
չեն ընդհանրապէս, այլ շատ տեղ Իտալացիներ, Գերմա-
նացիներ և Յոյներ են ասոնք: Միտուն զարդարուն խա-
նութի մը մէջ, պաշարուած ամենաքաղցրահամ ապրանք-
ներով ու զովարար ըմպելիքներով, Յոյնը, Իտալացին ու
Գերմանացին դարձեալ իրենց ապրանքները մեր սիրած
սեռին կը ծախեն: * * *

Բայց այս առևտուրները հաճելի ու բանաստեղծական
ԸԼԼալէ իզատ. . . չահաւոր ալ են: Գծովային աշխատու-
թեամբ տանջարան գործարաններու մէջ մեր «չահած»ը
ոչինչ է՝ բազմատեսիլ այս առևտուրներու շահին: Եւ,
բայց ինչպիսի շահաւէտ ԸԼԼալէ, Ֆիլիքսապէս մեծ օ-
գուտներ կ'ունենանք այս տեսակ ազատ և առողջաւէտ
զբաղումներու մէջ: * * *

Եզրակացութիւն. — Եզրակացութիւնը արդէն ամեն
Հայ բարեկամ ըրաւ: Մենք ալ ինչո՞ւ չը մտնենք այս առ-
ևտուրներուն մէջ: Մեր — Ձեր բոլոր աւելի ճիշդ էր — ու-
նեցած ստակով ինչո՞ւ համար ծաղիկի և շաքարեղէննե-
րու վաճառականութեամբ չ'զբաղինք, որոնց համար ո՛չ
արտակարգ խելք և ո՛չ ալ մեծ դրամագումար պէտք է:
Թ. Չ.

ԿԱՐԵՒՈՐ ԱՉԻՐ

ՏԻԳՐԻՍԻ ներկայ թուով իրենց բաժնեգրներն ցարդ
չի զրկող մեր բաժանորդաց մէջ մէկ պարտագիր (պիլ) կը
ղրկենք, խնդրելով որ զայնս վճարեն մինչև Յունիս 25:
Ձի վճարողներուն թերթերը պիտի կեցնենք անպատճառ՝
առանց ո՛ր և է խտրութեան: Պիլերը ամբողջ տարեկանի
հաշուով պատրաստուած են. վեց կամ երեք ամիս միայն
բաժանորդագրուիլ ուզողներն պարտաւորեալ չեն ամբողջ
տարեկանն մի անգամէն վճարել:

Բաժանորդագրիներն կարելի է վճարել մեր գործա-
կաններուն, և կամ ուղղակի մեզ զրկել նամակագրոջ-
մով. մընի օրաբերով և կամ ապահովեալ նամակաւ:

ՀՐԱԻՐ

Նիւ Եորքի Հայաստանեաց եկեղեցւոյ դպրաց դասը կը
ձանուցանէ թէ՛ վերջերս դպիրներէն շատերը քաղաքէս
մեկնած ԸԼԼալով՝ բնականաբար հրաժարած են: Այս առ-
թիւ՝ մասնաւոր կարգադրութեամբ՝ որոշուած է խնդրել
Նիւ Եորքի մէջ գտնուող, լաւ ձայն ունեցող երիտասարդ-
ներէն որ բարեհաճին զալ և ընկերանալ խմբիս: Ամեն
անոնք որք զպրութեան վարժ չեն, անոնց համար յա-
կապէս դաս պիտի տրուի:

Մասնաւորապէս կը խնդրուի ծնողներէ որ իրենց
մանր տղաքներն ալ զրկեն՝ դպրաց դասուն միանալու
համար: Ամէն ջանք չի պիտի խնայուի անոնց՝ դպրու-
թիւն ուսուցանելու համար:

Արարողութիւնը կ'ըսկսին ամեն Կիրակէ, կէսօրէն
յետոյ, ժամը 1ին, Ոսկերբան եկեղեցւոյն մէջ, 38րդ փո-
ղոց 7րդ ափսիսի անկիւնը:

Ի դիմաց Դպրաց դասու: Դպրապետ
Մ. ԹԱՇՃԱՆ

Նորակազմ Հայ Պայտիքի Բըւոլը կը հրաւիրէ իւր
անդամներն և ամեն հեծելանիւ նստող Հայ ներկայ գըտ-
նուիլ վաղը՝ Կիրակի օր, 27րդ փողոցի Մարաֆեան ճա-
շարանին առջև, առաւօտեան ժամը 9ին, անկէ Փրօփէքթ
Փարք երթալու համար:

ՄԱՀԱԳՈՅԺ

—Աղաճան Յովսէփեան անուն 28 տարեկան Խարբըղ-
ցի Հայ երիտասարդը, որ ժամանակէ մ'իվեր հիւանդա-
նոցն էր թոքախտի պատճառաւ, մահկանացուն կնքեց
անցեալ Շարաթ օր և թաղուեցաւ Պրօքլինի «Մասնիթ
Օրով» գերեզմանատան մէջ՝ իւր եղբօր ծախիւք: Թաղ-
ման արարողութիւնն կատարեց Պատ. Հայկակ Խաղոյեան:

ՈՐԲԵՐՈՒ ՍԻՆՆԻԿԸ

ԱՆՏԱՐԲԵՐ ԳԱՂՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Վաթառն հազար որբերու աղէ-
կաւոր ծայրին տակաւին խուլ կը մը-
նայ Նիւ Եորքի Հայ գաղթականու-
թիւնը: Նիւ Եորքի երկու հազար
Հայերու մեծ թիւը վեց որբախնամ
«եօթններ ունի միայն: Այս «եօթն»-
երը որ կը ճանչցուին Արևմտեան Նիւ
Եորքի Որբախնամ Միութեան անու-
նով, անչուչո գնահատելի են իրենց
ազգագուտ նպատակովը: Ասոնց ան-
գամներ գաղթականութեան փոք-
րամասնութեան կը վերաբերին, որք
կարծես սովորութիւն ըրած են չ'ըը-
նայել իրենց վերջին բննինները երբ
ազգային պարտականութիւնն կը կո-
չէ, քանի որ մեծամասնութիւնը
անզգայ ու անտարբեր կը մնայ օգ-
նութիւն հայցող Հայ մանուկին աք-
ցուեցոտ աչքին: Բայց ի՞նչ կ'ըսեմ.
սա մեծամասնութիւն կազմողներէ
շատեր ճաշարաններու և սենեակնե-
րու անկիւնը, գարեջուրի իրարանց-
ման «եռալէ»ներու և «մէտէթ»ներու
մէջ չեն մտնար նախատել այն օ-
տարներն, որոնք կ'աշխատին ապա-
գայ Հայութիւնը ոչնչացնել՝ անոր
զաւակներուն օտար գաղափարներ և
կրթութիւն տալով: Այդօհօրի ազդե-
ցութեան տակ միայն բուսական չէ
այս համոզումն ունենալ: Ի՞նչ կ'ընեն
ասոնք Հայութիւնն փրկելու համար:
Գիտե՞ն արդեօք թէ որոյ գըը-
կին մէջ կը սնանին ու կը մեծնան
60,000 Հայ որբերը. . . :

Նիւ Եորք. Պ. Ա. ԳԱՐԲԻԷԼԵԱՆ

—Շարժումի մէջ կը կարգանք.
«Հայ որբանոցները» խորագրին
տակ «Տէլի» Նիւս» հետեւեալ տողերն
հրատարակած է:

Ապրիլ 28ին եզգէթըը Հօլի սրա-
հին մէջ տեղի ունեցաւ «Աստուածա-
շնչի երկիրներու միախօսարներուն
օգնող ընկերութեան» 24րդ տարե-
կան գումարումը, նախագահութեամբ
լրտա Բիննեթի: Ընկերութեան շնա-
բերն եղած են եղբր գլխաւորապէս
Հայ որբերը հոգալ ու տեղացի «ա-
ւետարանի աշխատաւորներուն» օգ-
նել: Ընդհանրապէս խօսելով՝ Հայ որ-
բանոցներուն գործը լաւ կարգի գըը-
նած է. ամեն որբանոց իր որոշ նը-
պատի աղբիւրներն ունի: Անոնցմէ
մէկ քանին պահպանութիւնը վերջ-
նապէս յանձն առած են Չուրիցերիոյ
նպաստամտոյց յանձնաժողովները.
Իսկ միւսները կը հոգանուին Գերման-
իոյ, Ամերիկայի և Անգլիոյ յանձնա-
ժողովներուն հայթայթած միջոցնե-
րովը: Ամերիկեան Պրտա Ընկերու-
թեան պահած որբանոցներուն մէջ
երեք հազարէն աւելի պատուաբերա-
լներ կան, և ասոնց կը բաժնէ յիշեալ
Ընկերութիւնն իր հաւաքած դրամնե-
րը: Բրիտանիոյ Ընկերութեան այս սաները՝
Հայ որբերը, մաշուած ու վէրքերով
ծածկուած վիճակի մէջ կը մտնեն
որբանոցները և զգալի կերպով կը
փոխուին և կ'աղէկան իրենց ստա-
ցած խնամքին շնորհիւ: Ընկերութիւ-
նը անցեալ տարի 2,700 անգլ. ոսկի
հաւաքեց է, որուն 1,050ը ծախսեց է
Հայ որբերու համար, 360ը փոքր
Ասիոյ աւետարանական գործին տա-
րածմանը, իսկ մնացած գումարով
օգնեց է ուրիշ երկիրներու կարօտ-
եալներուն: Ներկայ տարւոյս մէջ ևս
ընկերութիւնը իր գլխաւոր հոգա-
ծութիւնը պիտի նուիրէ Հայ կոտո-
րածի որբերուն:

—Օր. Ալիս Պաբուէլ 25 տղար
ղրկեց Տ. Մաշթոց վարդապետին,
Տիկին Լ. Պ. Բըրթիսի անուամբ վա-
րագայ որբանոցին մէջ որբ մը պա-
հելու համար:

—Օրմանեան Պատրիարքը Պօլսոյ և արտասահմանի մեծատուններուն յատուկ գրութիւններ ուղղելով, կոչում ըրեր է անոնց բարեարտութեան և նպաստ խնդրեր է գտնուած որբանոցները պահելու և նորեր հաստատելու համար:

ՅԱՐԺՈՒՄ
—Ուսթըրի Որբախնամ Տիկնանց Ընկերութիւնն ինչու վանուց սրբանոցին մէջ որբ մը պահելու համար 25 տուար զրկած է ինքնորդ՝ Տ. Մաշթոց վարդապետի միջոցաւ:

—Թրոյէն կը գրեն Յուն. 13 թըւով: «Թրոյի Որբախնամ Ընկերութիւնը անցեալ կիրակէ նիստ ունեցաւ: 50է աւելի անձինք ներկայ էին ժողովին: Հրաւիրուած էր նաև Պատ. Ա. Մ. Իգնատիոսեան՝ ժողովն քաջաբերելու համար, բայց ոչ միայն քաջաբերութիւններ չ'եղան, այլ ներկայ եղողներէն շատեր վճատած մեկնեցան, վասն զի ընկերութեան մէջ կը գտնուին այնպիսի ինքնակոչ անձինք՝ որ ամբողջ Ընկերութեանը քայքայման պատճառ կ'ըլլան: Աւելի լաւ է իմաստունին հետ քար կրելն՝ քան թէ յիմարներուն հետ ուսել խմելն»: Այժմ Ընկերութիւնը ունի 25 անդամ և 28 տուար գըրամ: Բայց ցաւ է ըսել որ շունի խնայի ու բանիմաց շատ գըրտններ, որ կարողանան այդ գըրամը իւր նըպատակին յատկացնել: ՍԱՆԻՄ

—Հըտուրնի մեր թղթակիցը կը ծանուցանէ թէ Մայիս 15ի լսարանի ժողովին մէջ խօսած է Պատ. Պէննէեան, և որոյ գրողմամբ որբախնամ ընկերութիւն մը կազմուած է:

Մ Ա Ն Բ Ա Ա Ո Ի Բ Բ

—Մեր Աւսթըրի թղթակիցը կը գրէ. «Վերջի կողմերէն յետոյ քաղաքս գաղթող Հայ երիտասարդ մը տեղուց թիկ գործարանին մէջ գործ կատանայ շարժական 7 տոյարով: Բաւական ատեն այս գնով աշխատելէ վերջ, որ մը վարձքը 15 ապական տոյարէն կ'սկսի սրտել, և այսպէս կը շարունակուի 4 ամիս: Վերջերս այս անձ՝ գործէ ելած ըլլալով՝ իր վերջի պահանջն առնելու գացած ժամանակ սխալը երևան կ'եղնէ, բայց ոչինչ կը յաջողին առնել Հայ գործաւորէն»:

—Մանչէսթըրէն կը գրեն Յունիս 7 թուով. «Անցեալ Շաբաթ օր երկու ոստիկան կողկալածառի մը խանութին մէջ Պօսթոնէն եկող Հայ մը ձեռքակալեցին՝ Մեզբէցի Մկրտիչ Պաղտասարեան անուն՝ նմանեցնելով զայն Պօսթոնի մէջ մարդ մը սպաննող Իտալացիի մը: Բայց հետեւեալ օր Հայ ըլլալը իմացուելով արձակուեցաւ: Հոս կը գործէ հիմայ»:

—Նէվրիլէն կը գրեն մեզ թէ ապագայ անպատեհութեանց առաջն առնելու համար տեղուցն թանգարանի Միութիւնն վաւերացուած է վերջերս նահանգական Կառավարութեան կողմէ: Միութեան կանոնադրի անփոփոխ յօդուածներէն մին կը տրամադրէ որ, երբ թանգարանն լուծուի, անոր վերաբերող գոյք, գիրք գրամ և ամէն ինչ զրկուի Պօլսոյ իսա զիւզի Գալֆայեան որբանոցին:

—«Իրաւունք»ի մէջ կը կարդանք. «Դավրէժի առաջ. փոխանորդ Հ. Սարաճեան Ապրիլ 14ին մեկնեց է անկէ՝ էլ միածին երթալու համար: Կ'ըսուի թէ պարսկական կառավարութիւնը առաջին կարգի պատուանը շան մը շնորհէր է Հ. Սարաճեանի»:

—Պ. Աւրան Սահակեան, Եծնքըսի ծանօթ Հայ վաճառականն որ Բալիֆօրնիոյ կողմերն գնացած էր օդափոխութեան համար, վերադարձաւ շաբթուս մէջ:

—Տիար և Տիկին Տ. Բէլէկեան

այսօր կը մեկնին քաղաքէս Լօնտոն, Փարիզ, Մարսել և Կ. Պօլսոյ երթալու համար: Տ. Բէլէկեան, որ կը ճամբորդէ ապրանք գնելու և միանգամայն իր ազգականներն այցելելու համար, կը յուսայ վերադառնալ նիւ երթը յառաջիկայ աշնան սկիզբներն:

—Պ. Արմենակ Ալէօն, որ երկու տարիէ իվեր կ'ուսանէր Փիլոսօփի զինուորական ակադէմիան մէջ, իւր ընթացքն աւարտելով՝ յաջող քննութեամբ շրջանաւարտ եղաւ:

—Պ. Սարգիս Բրտանեան և Օր. Աղաւնի Բարակեանի ամուսնութիւնը տեղի պիտի ունենայ Յունիս շորսին, ազատութեան օրն, յուլիսը:

—Վաղը (Կիրակի) Ս. Էլմիսիանի Կաթողիկէ եկեղեցւոյ՝ Ս. Գրիգոր լուսաւորչի ձեռամբ շինուելուն 1595-րդ տարեդարձը լինելով՝ տեղուցս առ ժամեայ քարուղի Արթ. Տ. Պաղ վարդապետ հանգիստաւոր Ս. Պատարագ պիտի մատուցանէ և պիտի բացատրէ Ս. Էլմիսիանի շինութեան պատմութիւնը:

—Քաղաքիս Թրիպլին Լրագիրը, որ Տիգրիսի խմբագրականներէն շատ մը կարողութեամբ թարգմանել սկսած էր վերջերս, այս օրեր մեր Ապրիլ 23ի քաղաքականն ալ արտատպած է՝ ընտրի թարգմանութեամբ: Ուրիշ քանի մը թերթեր օրինակած են Թրիպլինի այս թարգմանութիւնն:

—Անցեալ երկուշաբթի երեկոյ ազգային Հոգաբարձութեան հրաւիրանքով ու ներկայութեամբ խառն ժողով մը տեղի ունեցաւ Տ. Բէլէկեանի առնելով հին Հոգաբարձութիւնն ու հաշուեքննիչ յանձնախումբը հասկացողութեան մը բերելու համար: Նախորդ Հոգաբարձութեան կողմէ ներկայ էին անոր ատենակալեան ու երկու անդամներ, իսկ հաշուեքննիչ յանձնախումբը կը ներկայանար իւր զիւանով միայն:

Ժողովոյ բացումէն անմիջապէս վերջ կարգացուեցաւ Հաշուեքննիչ յանձնախումբի տեղեկագիրն, որ մատուցուած էր անցեալներն ընդհանուր ժողովոյ: Այս տեղեկագիրն մանրամասնաբար կը պատմէր թէ ինչպէս նախորդ Հոգաբարձութիւնն՝ շատ մը դժուարութիւններ յարուցանելէ յետոյ՝ յանձնած էր վերջապէս յանձնախումբին ընդօրինակուած հաշուետեար մը, զոր քննելու համար յանձնախումբը կը կարօտէր նաև ուրիշ պաշտօնական թուղթերու և արձանագրութեանց: Հոգաբարձութիւնն իր ատենակալի միջոցաւ մերժած էր այդ թուղթերն յանձնել յանձնախումբին՝ այս վերջնոյ իրաւասութիւնն ու պաշտօնական հանգամանք ունեցած ըլլալն կասկածի ենթարկելով: Իրաց այս վիճակին մէջ յանձնախումբն անկարող ըլլալով իւր պաշտօնն կատարել, ինքիւրն ընդհանուր ժողովոյ կը յանձնէր ի պարտ ու պատշաճ անօրինութիւն:

Այս տեղեկագիր, որ օրինաց համաձայն և իրաւաբի լինիլ կը թուէր, կարգացուելէ վերջ ջանքեր եղան համոզել զՏ. Ալէօն և իր ընկերներն թէ իրենց ընթացքն հակառակ էր օրինաց, բայց անկարելի եղաւ յաջողիլ: Տ. Ալէօն բացարձակապէս մերժեց խոնարհիլ նոր կանոնադրի դէմ, և լաւազայն սեպեց տեղի տալ հրապարակային կռիւներու ու խռովութեանց, քան զիջանել յանձնախումբի արգար պահանջին:

Ժամը 11ին ժողովը ցրուեցաւ առանց արդիւնքի: Ուրախալի միակ կէտն սա էր թէ անպատեհութիւններ չի ծագեցան այս ժողովի մէջ: Թէև ոմանք կրակ կտրած, քանիցս առիթ տուին խռովութեանց, բայց ուրիշներու պաղարիւն վարմունքն արգելք եղաւ ծայրահեղութեանց երթալու:

—Քաղաքի Կարտընի Հայ Թարգմանը մեզ կ'իմացնէ թէ վերջերս շատ մը նորեկ Հայ գաղթականներ Պարճ Օֆիսէն իրենց բարեկամաց կրնալ երթալու համար՝ իրեն դիմած ու պաղատանք դրամ փոխ առած են՝ տեղերին կանուխէ անմիջապէս վերջ վճարելու պատուաւոր խոստումով: Բայց ցաւալի է ըսել թէ այս անձինք նեղութիւններն անցնելէ վերջ՝ ոչ միայն իրենց խոստումն չ'են կատարած, այլ և իրենց ուր ըլլալն անգամ նոյն անձէն գաղտնի պահած են՝ ի հարկէ պարտքերին վճարելու վտանգէն ազատուած ըլլալու մտօք: Արդարեւ շատ ցաւալի ընթացք է այս, որ կըրնայ առիթ տալ յիշեալ անձին այսուհետև շօզնել ուրիշներու՝ նոյնօրինակ պարագաներու տակ:

—Փրօվիսիանէ կը գրէ մեր թղթակիցը Յունիս 15 թուով: «Անցեալ կիրակի երեկոյ Փրօվիսիանի ազգային ժողովասրահին մէջ տօնուեցաւ խիստ շքեղ կերպիւ ազգային սահմանադրութեան 38րդ տարեդարձը Տ. Վաղինակ վարդապետի նախագահութեամբ: Տ. Սողիկեան ատենակալեան հանդիսին: Տ. Պետրոսեան, որ Պօսթոնէն հրաւիրուած էր այս առթիւ, Պատ. Պէննէեան և նախագահ Հայր սուրբը՝ ըստ աւուր պատշաճի հրահանգիչ ատենախօսութիւններ քննին: Հանդէսը տեւեց մինչև ժամը 9½, ու ժողովուրդը ցըրուեցաւ խոր տպաւորութեան տակ»:

—Աւսթըրի մեր թղթակիցը կը գրէ «Վաղինակ վարդապետ որ տեղուց շուրջ 10 և Հոգաբարձութեան մէջ տեղի ունեցող անհամաձայնութիւնն կարգադրելու համար շարժութեամբ տեղս կը գտնուէր, վերջապէս յաջողեցաւ իր այս ձեռնարկին մէջ, Հակառակորդը խոստովանած են իրենց յանցանքը ու երդում ըրած են այսուհետև ո' և է խռովութեանց պատճառ չըլլալ: Յառաջիկայ կիրակի ընդհանուր ժողով պիտի ըլլայ, ուր այս հաշտութիւնն պաշտօնապէս պիտի ծանուցուի ժողովուրդեան»:

—Անցեալ կիրակի օր Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ պաշտամունք կատարուած է երգեհոնի մը ընկերակցութեամբ: Ս. Պատարագ մատուցած է Տ. Ստեփան քահանայ, որուն համար ժողովուրդը \$61.75 նուիրած է իւր ճանապարհածախս: Տ. Ստեփան քահանայ այս շաբթու կը մեկնի Ամերիկայէ ընտանեօք հանդերձ:

—Տ. Մաշթոց վարդապետ ամեն Շաբաթ առաւօտ 20ի չափ երկսեռ Հայ մանուկներու հայերէն գրել, կարդալ ու ձայնագրութիւն կ'ուսուցանէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ սրահին մէջ: Գործը բաւական յառաջ գնացած է և կ'ըսուի թէ օգնականի մ'ալ պէտքը զգալի է արձեւր է:

—Մեր Հըտուրնի թղթակիցը կը գրէ մեզ թէ տեղուցն Հայերն ալ մի ազգային լսարան հաստատած են. այդ լսարանի վարչութիւն, որ կազմուած էր Ապրիլ 24ին Տ. Մաշթոց վարդապետի ներկայութեամբ, հինգ անդամներէ կը բաղկանար. ասոնց երկուքը նոյն տեղէն մեկնած ըլլալով՝ անցեալ կիրակի օր նոր ընտրութիւն կատարուած է անոնց տեղը լեցնելու համար: Վարչութեան այժմեան անդամներն են Տիարք Սիրանոսեան, Ամպրուկեան, Պէչկիօթուրեան, Մարեան և Յ. Է.:

—Տ. Ստեփան Տամպուրանեան, 2րդ ավընիւի Հայ մանրավաճառը պիտի ամուսնանայ Օր. Մարիամ Մարութեանի հետ 26 Յունիս, կիրակի կէսօրին, Ս. Ոսկերբան եկեղեցւոյ մէջ, ուր այս առթիւ յատկապէս Ս. Պատարագ պիտի մատուցանէ Արթ. Տ. Պաղ վարդապետ:

Ն Ո Ր Ա Վ Է Պ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն
ԱՆՄԵՂ ՉՈՂՆԵՐ
Ա.

—Սուրէնեանը ամփոփելով վերջին ուժերը, մրմնաց:

—Ախր, սիրելիս, իմ մահուանից յետոյ, այս երկրում երկար մի մնար. գլխաւոր արգելքը վերանում է, դաւաճանքիս հետ վերադարձէք Հայրենիք. այս է իմ կտակը, այս է իմ փառաբանք. միայն խօսք տուր ինձ:

Բայց դեռ խօսքը չ'վերջացրած, լեզուն չ'հնազանդեց իր զգացմունքների արտայայտութեան. ատամները սղմեցան. դիմագծերը կորցրին իրանց կանոնաւորութիւնը. սկսեց ջրզաճումը իւր, և Սուրէնեանը ընկաւ հոգեվարքի տաղնապետի մէջ: Վերջին րոպէներին Հայրական հոգածու աչքերը սեւեւեւ իր սիրելիների վերայ, որոց սեւեւ թիւերից յաւտեան գրկուելու էր ու արտասանեց հետեւեալ անկապ խօսքերը. —ա-ն-մ-ե-ղ-ը-ն-հ-ե-ր— և պլլալացող ճրագի նման հանգեցաւ:

Տիկին Սուրէնեան հեկեկում ու առատ արտասուքներ էր թափում: Նա այդ րոպէին համակուած հոգեկան թախիծներով կարծես հսկայ հիւանդանոց փուլ էր եկել իր գլխին. ամեն ինչ մոռացել էր, բայց չ'մոռացաւ վերջին անհրաժեշտ մի պարագա. դողդոջ մտանքով փակեց ամուսնի կիսարաց աչքերը, և ինքնաբերաբար արտասանեց հետեւեալ խօսքերը.

—Գնաս բարեաւ սիրելիս, քիչ օրերից մենք էլ թեզ կ'հետեւինք— և անմիջապէս երկնային հեռացրեց ամուսնի անշնչացած դիակի մօտից մի կողմ, որ իսկոյն դիւրարձները սկսեցին իրանց գործողութիւնը... Այդ միջոցին, որ դիւրարձները զրաղւած էին իրանց գործով, Տիկին Սուրէնեանը խորասուզել էր իւր մտքերի մէջ: Խնդիրը ըստ երևոյթին այնքան կնճառ չէր: Եթէ Հայրենիքում լինէր, մտածում էր նա, շատ հեշտ կ'լուծէր: Հոն ամենավերջին թշուառը գերեզմանանոցում տեղ ունի: Բայց այստեղ, ո՞ւր և ինչպէ՞ս թաղել...:

Այս մտմտութիւն մէջն էր, երբ հիւանդանոցին վերատեսուչը Հայ բժշկի միջոցով հարցրեց.

—Տիկին, ի՞նչպէս կ'կամենայիք կարգադրել, ո՞ւր փոխադրել կը տաք դիակը.

—Պարզ բան է. դիակը պէտք է փոխադրել գերեզմանոց և թաղել.

—Բայց անհրաժեշտ ծախքերը պէտք է որ հոգաք.

—Գերեզմանի համար ի՞նչ անհրաժեշտ ծախք կայ. ես աւելորդ ծախսերի պէտքը չեմ տեսնում եւ հարկաւ, եթէ լինի իսկ, դժբաղդաբար չեմ կարող: Ես իսկի այսօրայն ապրուստի ծախքը չունիմ. այս փոքրիկներին տեսնում էք, մինչև օրայ այս ժամը անօթի են:

—Ուրեմն ես կ'պատուիրեմ դիակը ամփոփել աղքատների դիականոցում, իսկ եթէ ցանկանում էք սեպակական գերեզմանում ամփոփել, այժմէն ասեմ, առ նուազն 70 տուար վճարելու պարտաւոր էք:

Տիկին Սուրէնեանի համար խընդիրը, իր բոլոր այլանդակութեամբ, պարզեցաւ. սոսկումով համաձայնեց, որ ինչպէս ուզում են այնպէս վարեն դիակի հետ. հիւանդապահից խնդրեց միկատը, իր ձեռքով կտրեց Սուրէնեանի գլխից երկու փունջ մազ, խնամով ծրարեց թղթապանակի մէջ և իր ծոցում տեղաւորելով՝ որբերի հետ հեկեկալով՝ երես դարձրեց մարդասիրական կոչուած այն վայրից, որ տեղ իրանց սիրելին՝ ընտանիքի խնամակալ Հայրը, առաջին գոհը՝ յաւիտեան աչքերը փակեց: (Շարունակելի)

